ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ԳՆ ՍԱՊԾ ԳՀԾՁԲ17/1

ք.Երևան «23» 06 2017 թ.

ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունը ի դեմս ծառայության աշխատակազմի ղեկավար Ա. Միրզոյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ռեսեթ Կոմպյուտեր Սերվիսիս», ի դեմս տնօրեն Ա. Ավագյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Ծրագրային ապահովման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է

Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 1 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 21550000 (քսանմեկ միլիոն հինգ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ,[1]:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[2]:

---

[1] *Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

[2] *Պայմանագիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում հատկացվել են ֆինանսական միջոցներ և կնքվել է համաձայնագիր:*

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[3]

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

---

[3] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 22 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գնորդ	Վաճառող
ՀՀ ԳՆ սենդամթերքի անվտանգության պետական ծառայության աշխատակազմ	« Ռեսեթ Կոմպյուտեր Սերվիսիս »ՍՊԸ
ք. Երևան, Կոմիտասի 49/2	ք. Երևան, Ազատության 24/19
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչության	«Յունիբանկ» ԲԲԸ
Հ/Հ 900011404093	Հ/Հ 24100072364300
ՀՎՀՀ 00454227	ՀՎՀՀ 05018448
Ա.Մրգոյան	Ա.Ավագյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
/աշխատակազմի ղեկավար/	/տնօրեն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
«27» 06 2017թ. կնքված
ՀՀ ԳՆ ՍԱՊԾ ԳՀԾՁԲ17/1 ծածկագրով պայմանագրի

ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
						մատուցման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ժամկետը**
1	2	3	4	5	6	7	8
Ծրագրային ապահովման ծառայություններ ի մատուցում	72261100/1	*** Տեխնիկական բնութագիրը կցվում է	դրամ	21550000	1	ՀՀ ք. Երևան, Կոմիտաս 49/2	20.12.2017

* *ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*
** *Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ՀՀ ԳՆ աշխատակազմի ՍԱՊԾ էլեկտրոնային կառավարման միասնական համակարգի գործածման նպատակով անհրաժեշտ նոր մոդուլների ստեղծման և ուսուցման, նախկին մոդուլների լրամշակման և ուսուցման, ուսուցողական ձեռնարկների ստեղծման, անհրաժեշտ ծրագրավորման աշխատանքների կատարման և հետագա սպասարկման ծառայությունների

Ի նկատի ունենալով ՀՀ ԳՆ ՍԱՊԾ (այսուհետ՝ ծառայություն) «Լամբրոն համակարգ» էլեկտրոնային կառավարման միասնական համակարգի (այսուհետ՝ համակարգ) մաշվածությունը և դրանից բխող խոչընդոտները համակարգի գործածման և ներդրման աշխատանքներում, անհրաժեշտ է կատարել հետևյալ աշխատանքները՝ համակարգում նոր մոդուլների ստեղծման և առկա մոդուլների լրամշակման ծրագրավորման աշխատանքներ, թարմացված համակարգի ուսուցանում ծառայության համապատասխան աշխատակիցներին, ուսուցողական ձեռնարկների ստեղծում, և ընթացիկ սպասարկման աշխատանքներ:

Ստորև ներկայացվում են աշխատանքների հաջող կատարման համար անհրաժեշտ տեղեկատվությունը:

Բովանդակություն

ՀՀ ԳՆ ՍԱՊԾ Լամբրոն միասնական տեղեկատվական համակարգ

Լոկալ համակարգը Ծառայության կողմից կիրառվող էլեկտրոնային կառավարման միասնական ավտոմատացված տեղեկատվական համակարգ է, որը սպասարկում է Ծառայության հիմնական գործառույթների կատարման բոլոր փուլերում: Այն ուղղված է ՀՀ-ում սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության եւ բուսասանիտարիայի, ինչպես նաեւ ոլորտային տեսչական հսկողության իրականացման արդյունավետության բարձրացմանը:

Լոկալ համակարգն իրականացված է վեբ-ծրագրի տեսքով, և օգտագործողները կարողանում են միանալ համակարգին համացանցի կամ ցանցի միջոցով: Լոկալ համակարգը տեղադրված է գլխավոր սերվերում, որը նույնպես միացված է համացանցին և զբաղվում է օգտագործողների կողմից ստացվող հարցումների մշակմամբ և գեներացնում է պատասխաններ:

Համակարգը նախատեսում է մի շարք օգտատերերի դերեր, որոնք որոշվում են օգտատիրոջ աշխատանքային պարտականություններից ելնելով:

Լոկալ համակարգի հիմնական գործառույթներն են

- Անասնաբուժական և ֆիտոսանիտարական փաստաթղթերի տրամադրում, գրանցում և հաշվառում:
- Կենդանիների հաշվառման և գրանցման ռեեստրի վարում:
- Ցանքատարածությունների հաշվում:
- Հայտնաբերված վնասակար օրգանիզմների ռեեստր:
- Պետական՝ տեսչական և տարածքային վերահսկողության թվայնացում

Համակարգերի մշակում/փոփոխությունների իրականացում, օգտվողների ուսուցում՝ համաձայն աշխատանքային ծրագրի՝

- հնարավորությամբ ԵԱՏՄ տեղեկատվության փոխանակման կազմակերպման համաձայնագրին համապատասխան:
- Ռիսկերի վերլուծության և կառավարման ենթահամակարգի ներդրում:
- Օգտատերերի մուտքային ակտիվության գրանցում:
- Փաստաթղթաշրջանառության աուդիտի հնարավորություն:

2.2. Փաստաթղթերի մշակում

- - Միջոցառման իրականացման նպատակով նախագծի կառավարման պլանի (Project Management Plan) մշակում,
- - Տեխնիկական առաջադրանքների մշակում՝ համաձայն Ծառայության ստորաբաժանումների և տարածքային մարմինների աշխատանքային ծրագրերի:
- - Համակարգերի օգտվողների ձեռնարկների մշակում:

Հղումներ և հարակից փաստաթղթեր

- Սննդամթերքի անվտանգության մասին ՀՀ օրենք
- Անասնաբուժության մասին ՀՀ օրենք
- Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին ՀՀ օրենք
- Բուսասանիտարիայի մասին ՀՀ օրենք
- Կերերի մասին ՀՀ օրենք
- «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենք
- «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենք
- Վարչական իրավախախտումների մասին ՀՀ օրենսգիրք
- Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2014 թվականի հոկտեմբերի 30-ի Կենսաբանական ակտիվ հավելումների ցանկը, թույլատրելի մակարդակները, դրանց արտադրության մեջ օգտագործվող վիտամինների ձևերը և արգելված բույսերի ցանկը հաստատելու մասին N 1210-Ն որոշում.
- Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2014 թվականի հոկտեմբերի 30-ի Շշալցված խմելու ջրին ներկայացվող պահանջները հաստատելու մասին N 1240-Ն որոշում.
- Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2014 թվականի հոկտեմբերի 30-ի Սննդամթերքի և սննդային միջավայրերի հետ շփման համար նախատեսված պոլիմերային և այլ նյութերից պատրաստված արտադրանքին ու նյութերին ներկայացվող պահանջները հաստատելու մասին N 1211-Ն որոշում.
- Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2014 թվականի հոկտեմբերի 30-ի Հայաստանի Հանրապետությունում սանիտարահամաճարակային հսկողության (վերահսկողության) ենթակա ապրանքների և պետական գրանցման ենթակա ապրանքների ցանկերը հաստատելու մասին N 1229-Ն որոշում.
- Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2014 թվականի հոկտեմբերի 30-ի Արտադրանքի (ապրանքների) սանիտարահամաճարակային և հիգիենիկ պահանջներին համապատասխանությունը հավաստող անվտանգության միասնական փաստաթղթի՝ պետական գրանցման վկայականի ձևը և այն տալու կարգը, պետական գրանցման վկայականների ռեեստրի վարման կարգը հաստատելու մասին N 1208-Ն որոշում.
- Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2014 թվականի հոկտեմբերի 30-ի Սանիտարահամաճարակային հսկողության (վերահսկողության) ենթակա ապրանքներին ներկայացվող սանիտարահամաճարակային և հիգիենիկ միասնական պահանջները, սննդամթերքի անվտանգության և սննդային արժեքին ներկայացվող պահանջները, միասնական սանիտարական պահանջներով

սահմանված ապրանքների ցանկը, պահածոյացված սննդամթերքի անվտանգությանը ներկայացվող հիգիենիկ պահանջները, ձկան, խեցգետնակերպերի, փափկամորթների, երկկեղեցաղների, սողունների և դրանց վերամշակման մթերքների անվտանգության մակաբուծական ցուցանիշները հաստատելու մասին N 1237-Ն որոշում.

- Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2014 թվականի հոկտեմբերի 30-ի Պարենային հումքի արտադրության ժամանակ կենդանական ծագում ունեցող սննդամթերքում անասնաբուժական դեղամիջոցների առավելագույն մնացորդային մակարդակները հաստատելու մասին N 1207-Ն որոշում.
- Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2014 թվականի հոկտեմբերի 30-ի «Սննդամթերքում ցեզիում-137 և ստրոնցիում-90 ռադիոնուկլիդների թույլատրելի մակարդակները հաստատելու մասին» N 1209-Ն որոշում.
- Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2014 թվականի հոկտեմբերի 30-ի Սննդային հավելումների և բուրավետիչների անվտանգությանը ներկայացվող պահանջները հաստատելու մասին N 1241-Ն որոշում.
- Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2014 թվականի հոկտեմբերի 30-ի Տեխնոլոգիական օժանդակ միջոցների անվտանգությանը ներկայացվող միասնական սանիտարահամաճարակային և հիգիենիկ պահանջները (կանոնակարգերը) հաստատելու մասին N 1242-Ն որոշում.
- Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2014 թվականի հոկտեմբերի 30-ի Հանքային ջրերին ներկայացվող պահանջները հաստատելու մասին N 1213-Ն որոշում.
- Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2014 թվականի հոկտեմբերի 30-ի Եվրասիական տնտեսական միության անդամ մի պետությունից Եվրասիական տնտեսական միության անդամ մյուս պետություն փոխադրվող, Եվրասիական տնտեսական միության Եվրասիական տնտեսական տարածք ներմուծվող՝ անասնաբուժական հսկման ենթակա ապրանքների արտադրություն, վերամշակում և (կամ) պահպանում իրականացնող կազմակերպությունների և անձանց ռեեստրների օրինակելի ձևերը, դրանց ձևավորման և վարման ընթացակարգը, հսկման ենթակա ապրանքների արտադրություն, վերամշակում և (կամ) պահպանում իրականացնող կազմա-կերպու-թյունների և անձանց ռեեստրների ձևերի տվյալների փոխանցման կանոնակարգի ու ձևաչափի վերաբերյալ տեխնիկական պայմանները հաստատելու մասին N 1231-Ն որոշում.
- Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2014 թվականի հոկտեմբերի 30-ի Անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա ապրանքների ցանկերը հաստատելու մասին N 1205-Ն որոշում.
- Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2014 թվականի հոկտեմբերի 30-ի Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանին և Հայաստանի Հանրապետության տարածքում անասնաբուժական վերահսկողության իրականացման միասնական ընթացակարգը և անասնաբուժական վերա-հսկողության իրականացման ժամանակ ընդունվող ակտերի օրինակելի ձևերը հաստատելու մասին N 1230-Ն որոշում.
- Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2014 թվականի հոկտեմբերի 30-ի Անասնաբուժական վերահսկողության ենթակա օբյեկտների համատեղ ստուգումների, Եվրասիական տնտեսական միության տարածքում արտադրված ենթահսկման ապրանքների նմուշառման, Եվրասիական տնտեսական միության կազմա-կեր-պություններ և երրորդ երկրների կազմակերպությունների ռեեստրների վարման միասնական կարգերը հաստատելու մասին N 1228-Ն որոշում.
- Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2014 թվականի հոկտեմբերի 30-ի Սանիտարական, անասնաբուժական, բուսասանիտարական միջոցառումների համարժեքության ճանաչման և դիսկի գնահատման կարգը հաստատելու մասին N 1206-Ն որոշում.
- Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 21-ի «Կենդանիների, կենդանական ծագում ունեցող մթերքի, հումքի, կերերի, լրացակերերի, կերային խառնուրդների, կերային հավելումների, սննդամթերքի, սննդամթերքի հետ շփվող նյութերի և սննդային ու կենսաբանական ակտիվ հավելումների ներմուծման, արտահանման, հանրապետության տարածքում փոխադրման համար անասնաբուժական ուղեկցող փաստաթղթեր, անվտանգության սերտիֆիկատներ և համապատասխանության տեղեկանք տալու կարգը, անասնաբուժական ուղեկցող փաստաթղթերի, անվտանգության սերտիֆիկատների և համապատասխանության տեղեկանքի ձևերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 4-ի N 1241-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1499-Ն որոշում.
- Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 21-ի «Սննդամթերքի, սննդամթերքի հետ անմիջական շփման մեջ գտնվող նյութերի ներմուծման, արտահանման և տարանցիկ փոխադրման, ինչպես նաև անասնաբուժական հսկողության (վերահսկողության) ենթակա ապրանքների (արտադրանքի) արտահանման կարգը սահմանելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի օգոստոսի 19-ի N 1228-Ն և 2005 թվականի նոյեմբերի 9-ի N 1901-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1442-Ն որոշում.
- Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 16-ի «Սննդամթերքի անվտանգության և անասնաբուժության ոլորտներում պետական վերահսկողության շրջանակներում իրականացվող նմուշառման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի ապրիլի 19-ի N 598-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1142-Ն որոշում.
- Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի փետրվարի 21-ի «Հայաստանի Հանրապետություն ներմուծվող սննդամթերքի ռիսկայնության հիման վրա հսկողության մեթոդաբանությունը հաստատելու մասին» N 218-Ն որոշում.
- Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի փետրվարի 28-ի «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կողմից իրականացվող ստուգումների ստուգաթերթերը հաստատելու մասին» N 338-Ն որոշում.
- Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի սեպտեմբերի 5-ի «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կողմից իրականացվող ստուգումների ստուգաթերթերը հաստատելու մասին» N 970-Ն որոշում.
- Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հոկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետությունից Եվրոպական միության երկրներ արտահանվող մեղրին ներկայացվող պահանջները, ինչպես նաև մարդու սպառման համար նախատեսված մեղրի և մեղվաբուծական այլ արտադրանքների արտահանման առողջության սերտիֆիկատ տալու կարգը և առողջության սերտիֆիկատի ձևը հաստատելու մասին» N 1133-Ն որոշում.

- Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի սեպտեմբերի 29-ի «Կենդանական ծագման սննդամթերք արտադրող սննդի շղթայի օպերատորի գործունեության եզրակացություն տալու կարգը, ինչպես նաև կենդանական ծագման սննդամթերքի արտադրության ոլորտները և տեսակները հաստատելու մասին» N 989-Ն որոշում.
- Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 21-ի «Անասնաբուժության մեջ օգտագործվող կենսաբանական նյութերի (անասնաբուժական դեղամիջոցների) Հայաստանի Հանրապետություն ներմուծմանև Հայաստանի Հանրապետությունից արտահանման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի օգոստոսի 19-ի N 1228-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 1088-Ն որոշում.
- Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի «Կենդանիների կարանտինային, հատուկ վտանգավոր և պարտադիր ծանուցման ինֆեկցիոն հիվանդությունների ցանկը հաստատելու մասին» N 1081-Ն որոշում.
- Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի փետրվարի 25-ի «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայությանը Հայաստանի Հանրապետություն ներմուծված սննդամթերքի, սննդամթերքի հետ անմիջական շփման մեջ գտնվող նյութերի, անասնաբուժական և բուսասանիտարական կարանտին հսկողության (վերահսկողության) ենթակա ապրանքների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 18-ի N 1228-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N169-Ն որոշում.
- Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի մարտի 9-ի «Ներմուծման և արտահանման ժամանակ ներգրավված մարմինների՝ իրենց գործունեության վայրերից և աշխատանքային ժամերից դուրս ծառայությունների մատուցման կարգը հաստատելու մասին» N 172-Ն որոշում.
- Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի նոյեմբերի 14-ի «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության նպատակով փորձարկումներ իրականացնող փորձարկման լաբորատորիաների՝ մրցույթով լիազորման կարգը հաստատելու մասին» N1228-Ն որոշում.
- Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի «Վտանգավոր սննդամթերքի և վտանգավոր կերի օգտահանման ու ոչնչացման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 12-ի N 824-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N1060-Ն որոշում.
- Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի փետրվարի 16-ի «Կենդանիների սպանդից գոյացած մսեղիքի անասնաբուժական որոշման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 666-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N142-Ն որոշում.
- Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մարտի 10-ի «Կերի շղթայի օպերատորի գործունեության եզրակացություն տալու կարգը սահմանելու մասին» N 252-Ն որոշում.
- Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի դեկտեմբերի 22-ի «Պարենային և ոչ պարենային արտադրանքի գրանցում իրականացնող իրավասու մարմիններ սահմանելու մասին» N 1339-Ն որոշում.
- Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մարտի 31-ի «Կենդանիների սպանդից գոյացած մթերքի անասնաբուժասանիտարական փորձաքննության իրականացման կարգը սահմանելու մասին» N 426-Ն որոշում.
- Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի ապրիլի 8-ի «Բուսասանիտարական փորձաքննության նպատակով փորձանմուշ վերցնելու կարգը սահմանելու մասին» N 514-Ն որոշում.
- Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Ձկան և ջրային կենդանիների անասնաբուժասանիտարական փորձաքննության կարգը հաստատելու մասին» N 2319-Ն որոշում.
- Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի «Կաթի անասնաբուժասանիտարական փորձաքննության կարգը հաստատելու մասին» N 2305-Ն որոշում.
- Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հոկտեմբերի 5-ի «Մեղրի անասնաբուժասանիտարական փորձաքննության կարգը սահմանելու մասին» N 1416-Ն որոշում.
- Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի «Պեստիցիդների ու ագրոքիմիկատների փորձաքննության անցկացման կարգը եվ պեստիցիդների ու ագրոքիմիկատների ներմուծման և արտահանման մասին եզրակացության ձևերը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 4-ի N 1151-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1192-Ն որոշում.
- Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի նոյեմբերի 26-ի «Ձվի անասնաբուժասանիտարական փորձաքննության կարգը սահմանելու մասին» N 1391-Ն որոշում.
- Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 12-ի «Պեստիցիդների և ագրոքիմիկատների պետական գրանցման, վերագրանցման և գրանցումից հանելու կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի օգոստոսի 30-ի N 1039-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 478-Ն որոշում.
- Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի օգոստոսի 30-ի «Բույսերի, բուսական արտադրանքի և կարգավորվող առարկաների ներմուծման թույլտվության և ներմուծման, արտահանման, վերարտահանման բուսասանիտարական հավաստագրերի տրամադրման կարգը և ձևերը սահմանելու մասին» N 1093-Ն որոշում.
- Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մայիսի 7-ի Կերերի և կերային հավելումների արտադրությանը, ինչպես նաև կերերի և կերային հավելումների օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու մասին N471-Ն որոշում.
- Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունիսի 4-ի «Հնդկաստանի Հանրապետությունից Հայաստանի Հանրապետություն գոմեշի մսի ներմուծմանը ներկայացվող պահանջները և Հնդկաստանի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության ներկայացուցչի գործունեության կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի օգոստոսի 19-ի N 1050-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 631-Ն որոշում.
- Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 23-ի «Սննդի արտադրության, վերամշակման և բաշխման փուլերում (նախնական արտադրության գործառնություններից հետո) պատշաճ հիգիենիկ ու արտադրական գործելակարգի և վտանգի վերլուծության և հսկման կրիտիկական կետերի համակարգի, ինչպես նաև կերեր և կերային

հավելումներ արտադրողների կողմից վտանգի վերլուծության և կրիտիկական կետերի հսկման համակարգերի (ըստ արտադրության ոլորտների) ներդրման ժամանակացույցը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մայիսի 3-ի N 531-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 827-Ն որոշում.

- Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 30-ի «Եվրասիական տնտեսական միության (մաքսային միության) տեխնիկական կանոնակարգերի պահանջների պահպանման նկատմամբ պետական վերահսկողություն իրականացնող լիազոր մարմիններ սահմանելու մասին» N 71-Ն որոշում.

Ծառայությունների մատուցման շրջանակ

Ստորև նշված են սույն տեխնիկական առաջադրանքով սահմանված ծառայությունների մատուցման պահանջները՝

Նախագծի կառավարման պլանի մշակում

կատարողը պետք է միջոցառման համար ներկայացնի նախագծի կառավարման պլան՝

ՊԱՀԱՆՋ 1	Նախագծի կառավարման պլանը պետք է ներառի, բայց չսահմանափակվի հետևյալով՝ • նախագծի իրականացման պլան (միջոցառումներ, ծրագրավորման աշխատանքների կատարման գրաֆիկ, աշխատանքների փոխկախվածությունը, ռեսուրսներ և այլն) • ուսուցման պլան, • սպասարկման և տեխնիկական աջակցության պլան,

Տեխնիկական առաջադրանք

Նոր ծրագրավորվող համակարգը պետք է լինի միասնական, և տրոհվի ենթահամակարգերի, ցանկացած գործառույթ պետք է իրականացվի մեկ ծրագրային ապահովման շրջանակներում:

Համակարգի մուտքը պետք է լինի միասնական և կախված դերերից, օգտատերը պետք է ունենա տարբեր ենթահամակարգերի հասանելիություն:

Օգտատերերը համակարգ մուտք պետք է գործեն կենտրոնացված համակարգից, յուրաքանչյուր օգտատեր պետք է ունենա հնարավորություն օգտագործելու ենթահամակարգերը, իրեն տրված իրավունքների շրջանակներում:

Համակարգի ճարտարապետության մեջ անհրաժեշտ է նախատեսել ինտեգրման հնարավորություններ՝ համակարգում անհրաժեշտ է ապահովել՝ փոփոխվող բիզնես մոդելներին ադապտացվելու ճկուն ու թեթև մեխանիզմներ, սահմանված բիզնես գործընթացներին դյուրին ինտեգրման հնարավորություն: Միասնական համակարգը պետք է ունենա այլ համակարգերի հետ ինտեգրվելու հնարավորություն, մասնավորապես պետք է ապահովվեն XML , JSON , SOAP տեխնոլոգիաներով տվյալների մուտքի և ելքի հնարավորություն: Համակարգը պետք է ապահովի ցանկացած ստեղծված կամ փոփոխված փաստաթղթի հետագծելիությունը, հիմքերի վերծանումը:Համակարգը նախագծելուց/ծրագրավորելուց/ներդնելուց և ուսուցանելուց պետք բավարարվեն ստորև նշված ենթակետերը.

- Ներկայում գործող համակարգի տրամաբանության վերաշինում:
- Անասնաբուժության, բուսասանիտարիայի և սննդամթերքի անվտանգության ոլորտում գործունեություն իրականացնող անձանց ռեեստրի վարում և առցանց գրանցման պորտալի ներդրում:
- Ծառայության, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի և անդամ պետությունների սննդամթերքի անվտանգության ոլորտի կառույցների միջև տեղեկատվության փոխանակման ենթահամակարգի նախապատրաստում Մաքսային միության ընդհանուր սննդամթերքի անվտանգության, ֆիտոսանիտարական և անասնաբուժական վերահսկողության գործընթացների շրջանակում

(այդ թվում՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի, ՀՀ և անդամ պետությունների սննդամթերքի անվտանգության ոլորտի լիազոր մարմինների միջև տվյալների փոխանցման համակարգի նախապատրաստում (ինտեգրացված համակարգի ստեղծման աշխատանքների շրջանակներում)):

- Սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտներում տրամադրվող փաստաթղթերի թվայնացում, ձևաչափերի և կառուցվածքի համապատասխանեցում Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշումներին:
- ԵԱՏՄ տարածքով տեղափոխվող ծառայության ենթահսկման բեռների նկատմամբ հսկողության ենթահամակարգի ներդրում՝ սննդամթերքի անվտանգության ոլորտին առընչվող իրավական ակտերից բխող ընթացակարգերին համապատասխան:
- Ծառայության գործունեությունից բխող վճարման ենթակա գումարների հաշվարկման և գանձման ենթահամակարգի ներդրում, մասնավորապես՝
  - Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդված, 2-րդ և 3-րդ մասեր:
  - Վարչական իրախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի հոդվածներ՝ 238,238[2],238[1] և 182[2]:
  - Կենդանական ծագման սննդամթերք արտադրող սննդի շղթայի օպերատորների գործունեության եզրակացության տրամադրում (Սննդամթերքի անվտանգության մասին օրենքի 18 հոդված):
  - Կերային հավելումների , պրեմիքսների, համակցված կերերի արտադրության և շրջանառության փուլերում ընդգրկված կերի շնթայի օպերատորների գործունեության եզրակացության տրամադրում (ՀՀ օրենք կերի մասին, հոդված 16, Պետական տուրքի մասին ՀՀ օրենք, հոդված 20 , 49-րդ մաս):
- Ծառայության կողմից տրվող հաշվարկման ենթակա ձևաթղթերի տրման և հաշվարկման ենթահամակարգի ստեղծում:
- Ծառայության և ԵԱՏՄ անդամ պետությունների միջև տեղեկատվության փոխանակման համակարգի ներդրում վերլուծական և հսկողական գործառույթների կատարման հնարավորությամբ:

Ստորև ներկայացվում է միջոցառումներին վերաբերող հատուկ պահանջները:

ՊԱՀԱՆՋ 1	Հերթական ենթահամակարգի ծրագրավորման փուլից առաջ կատարողը պետք է ծառայության աշխատակազմին ներկայացնի մատուցվող ծառայությունների նախատիպը:
ՊԱՀԱՆՋ 2	Համակարգերի պահանջները պետք է մշտապես լրամշակվեն՝ կապված համակարգերի, գործառութային, օրենսդրական փոփոխությունների և այլ գործոնների հետ:
ՊԱՀԱՆՋ 3	Նոր ծրագրավորվող համակարգի մեջ պետք է պահպանված լինեն նախկինում գործող լոկալ համակարգի տրամաբանությունը, իսկ արմատական փոփոխությունների կարիքի դեպքում՝ համաձայնեցվեն ծառայության հետ:

Թեստավորման իրականացում

ՊԱՀԱՆՋ 4	Ծրագրային ապահովումները պետք է նախքան տեղադրումը փորձարկվեն թեստային միջավայրում:
ՊԱՀԱՆՋ 5	Համակարգի ընդունման, թեստավորման և շահագործման ընթացքում բացահայտված թերությունները պետք է գրանցվեն կատարողը հատուկ համակարգում, որին մուտք պետք է տրամադրվի ծառայության աշխատողներին: Յուրաքանչյուր այդպիսի գրառում իրենից ներկայացնելու է էլեկտրոնային թերթիկ (ticket), որը կներառի խնդրի (թերության) մանրամասն նկարագրությունը, վերարտադրման քայլերը և այլ լրացուցիչ տեղեկատվություն (օր.՝ լուծման առաջարկ, հղում փաստաթղթին):

ԱՂՅՈՒՍ 6

Համակարգերի թեստավորման համար պետք է առնվազն կիրառվեն հետևյալ ֆունկցիոնալ և ոչ ֆունկցիոնալ թեստավորման տեսակները:

Թեստի տեսակը	Նպատակը
Կոդի թեստավորում Code testing	Իրականացվում է ծրագրավորման ինժեներների կողմից՝ ծրագրային միավորի իրականացման ժամանակ:
Համակարգի միավորի թեստ Unit testing	Կիրառվում է արդեն պատրաստ մեկ միավորի՝ ենթագործառույթի ստուգման համար:
Ինտեգրման թեստ Integration testing	Ուղղված է բացահայտելու տարբեր ենթահամակարգերի և երրորդ կողմի համակարգերի հետ ինտեգրման արդյունքում առաջացած խնդիրները:
Հետանցման թեստ Regression testing	Իրականացվում է նոր ծրագրային միավորի կամ նոր համակարգի գործառույթի ներդրման ժամանակ՝ բացառելու նոր հավելումների արդյունքում նախորդ գործառույթների թերությունները:
Արտադրողականության թեստ Performance testing	Բացահայտում է համակարգի արձագանքները ոչ ստանդարտ և չնախատեսված իրավիճակներում, ինչպես նաև երրորդ կողմերի համակարգերի հետ փոխազդեցության արդյունքում առաջացած համակարգի արտադրողականության խնդիրները:
Բեռնավորման թեստ Load testing	Նպատակն է պարզել համակարգի կարողությունները մեծաքանակ օգտագործողների համաժամանակյա աշխատանքների կամ մեծածավալ տվյալների հոսքի ժամանակ:
Համատեղելիության թեստ Compatibility testing	Գնահատում է համակարգի համատեղելիությունը համակարգչային տարբեր միջավայրների հետ՝ ներառյալ գործավար համակարգը, սարքաշարը, ցանցային թողունակությունը, զննիչները, տվյալների շտեմարանները և այլն:
Օգտագործման հարմարավետության թեստ Usability testing	Ուղղված է բացահայտելու համակարգի կիրառման թերությունները, օգտագործման հարմարավետության աստիճանը և համապատասխանությունը համակարգի օգտագործողների լսարանին՝ վերջնական օգտագործողներին:

Անվտանգության թեստ Security testing	Ստուգում է համակարգի անվտանգությունը, այնտեղ փոխանակվող և պահվող տվյալների ապահովությունն ու մատչելիության վավերականությունը:
Համընդհանուր թեստ System testing	Համակարգի համընդհանուր թեստավորումն է, որն ուղղված է ստուգիչ վերջնական թեստավորում իրականացնելու համար՝ ըստ համակարգի բիզնես տրամաբանության և գործառույթների փոխազդեցության:
Օգտագործողի ընդունման թեստ User Acceptance Testing (UAT)	Կատարում է նախագծի գլխավոր պատվիրատուն/շահառուն՝ կատարողի բիզնես վերլուծաբանների օգնությամբ՝ համակարգի ամբողջական ֆունկցիոնալությունը վավերացնելու համար: Սովորաբար իրականացվում է ընդհանուր համակարգի կամ դրա որևէ ենթահամակարգի ամբողջական թողարկումից առաջ:

4.6. Ուսուցման իրականացում

ՊԱՀԱՆՋ 7	կատարողը պետք է իրականացնի ներդրված համակարգերի վերաբերյալ ուսուցումներ: Ուսուցումն իրականացվելու է 200 օգտվողի համար:
ՊԱՀԱՆՋ 8	կատարողը մինչև համակարգերի ներդրումը պետք է ներկայացնի ուսուցման ծրագիր: Ուսուցման ծրագիրը պետք է կազմված լինի՝ 1. Համակարգից օգտվողների ուսուցման սկզբունքով, 2. Վերապատրաստողների վերապատրաստման սկզբունքով, 3. Ծառայության SS ոլորտի աշխատակիցների ուսուցման սկզբունքով,
ՊԱՀԱՆՋ 9	Դասընթացի նկարագրությունը պետք է ներառի, բայց չսահմանափակվի հետևյալով՝ • դասընթացի անվանում, • դասընթացի նպատակ, մատուցման մեթոդներ, • դասընթացի տևողությունը և մասնակիցների քանակը՝ մեկ դասընթացի համար, • դասընթացի բովանդակության և պլանի նկարագրություն, • դասընթացն անցկացնողի որակավորումն ու փորձը:
ՊԱՀԱՆՋ 10	Ուսուցման ընթացքում պետք է ներկայացվեն համակարգի օգտվողի ձեռնարկներ, որոնք պետք է առնվազն ներառեն հետևյալը՝ • համակարգի/ենթահամակարգի նկարագրություն, • գործառույթների նկարագրություն, • հաղորդագրությունների Նկարագրություն՝ ներառյալ համակարգի սխալների վերաբերյալ հաղորդագրությունների նկարագրություն, • գործնական օրինակներ/պատկերներ, • համակարգերի վերականգնման, պահուստավորման (backup, restore) ընթացակարգերի նկարագրություն (SS անձնակազմի համար):
ՊԱՀԱՆՋ 11	Ուսուցման լեզուն պետք է լինի հայերեն: Եթե կատարողը ուսուցումներ անցկացնելու համար ներգրավում է օտարերկրյա փորձագետ, ապա թարգմանչական ծառայությունները վճարվում են իր կողմից:

4.7. Համապատասխանություն օրենսդրությանը

ՊԱՀԱՆՋ 12	Համակարգը պետք է մշակվի Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 14-ի թիվ 29 որոշման Եվրասիական տնտեսական միության շրջանակներում ընդհանուր գործընթացների ցանկի՝ ՀՀ ԳՆ ԱԱՊԾ-ին վերաբերվող գործընթացներին ապագայում հնշտ ինտեգրվելու մեթոդոլոգիաով:

4.8. Կիրառվող տեխնոլոգիաներ

ՊԱՀԱՆՋ 13	կատարողը պետք է առաջարկի այնպիսի տեխնոլոգիաներ, որոնք համազոր են պատվիրատուի կողմից ներկայումս կիրառվող տեխնոլոգիաներին, գործող ենթակառուցվածքը և գործընթացները խթանելու նպատակով պետք է առավելագույնս օպտիմալացնել գործող ՏՏ ենթակառուցվածքը:
ՊԱՀԱՆՋ 14	Եթե կատարողը կիրառելու է այնպիսի տեխնոլոգիաներ, որոնք տարբերվում են պատվիրատուի կողմից ներկայումս կիրառվող տեխնոլոգիաներից, ապա կատարողը պետք է պատվիրատուի հետ նախօրոք համաձայնեցնի համապատասխան լիցենզիաների ձեռքբերման եղանակներն ու պայմանները:
ՊԱՀԱՆՋ 15	կատարողը համակարգերի մշակման, զարգացման, փոփոխությունների և հավելումների իրականացման ընթացքում պետք է հաշվի առնի համատեղելիությունը ներկայումս կիրառվող տեղեկատվական համակարգերի հետ:
ՊԱՀԱՆՋ 16	Համակարգերը պետք է ներդրվեն չորս առանձին միջավայրերում՝ արտադրություն, թեստավորում, ուսուցում, պահուստային:
ՊԱՀԱՆՋ 17	Դերերի կառավարման համակարգը պետք է լինի միասնական: Պետք է տրամադրվի դերերի կառավարման արդյունավետ գործիք, որը թույլ կտա ստեղծել համակարգի ցանկացած մոդուլի և գործառույթի օգտագործման թույլտվություններ, խմբեր և այլն:
ՊԱՀԱՆՋ 18	Կիրառվող դատակարգիչները պետք է լինեն միասնական:
ՆԱԽԸՆՏՐԵԼԻ ՊԱՀԱՆՋ 1	Նախընտրելի օպերացիոն համակարգն է Linux-ը:
ՆԱԽԸՆՏՐԵԼԻ ՊԱՀԱՆՋ 2	Նախընտրելի ապարատային ապահովման պլատֆորմը՝ HP:

ԱԽԸՆՏՐԵԼԻ ՊԱՀԱՆՋ 3	Նախընտրելի տվյալների շտեմարանը՝ MS SQL:
ՆԱԽԸՆՏՐԵԼԻ ՊԱՀԱՆՋ 4	Ծրագրավորման Framework-ը լինի 1C 8.3,Laravel կամ Symphony.

4.9. Համակարգի ոչ գործառնական պահանջներ

4.9.1. Արտադրողականություն

ՊԱՀԱՆՋ 19	Համակարգերը պետք է աշխատեն 24/7 ռեժիմով:
	Համակարգի սարքին վիճակում լինելու ժամանակը պետք է լինի 99.5 տոկոսից ավելի: Սա նշանակում է, որ համակարգի՝ տարեկան անսարք վիճակում լինելու ժամանակը պետք է լինի 1.83 օրից պակաս: Սպասարկման և թարմացումների նպատակով համակարգերի անջատումները պետք է լինեն պլանային և անպայմանորեն համաձայնեցվեն ծառայության համապատասխան աշխատողների հետ: Համակարգերի վթարային անջատումները չեն կարող գերազանցել 4 (չորս) ժամը, եթե պատճառն անսարք սարքավորման փոխանակման նպատակով նոր սարքավորման ցացակայությունը չէ:
ՊԱՀԱՆՋ 20	Համակարգերը պետք է կարողանան արդյունավետ կերպով սպասարկել առավելագույնը 500 օգտվողի: Համաժամանակյա ակտիվ օգտվողների առավելագույն շեմը սահմանվում է մինչև 200 օգտվող:
ՊԱՀԱՆՋ 21	Առավելագույն ծանրաբեռնվածության պայմաններում համակարգի 95% ֆունկցիոնալության արձագանքման ժամանակահատվածը պետք է կազմի առավելագույնը 10 վայրկյան:
ՊԱՀԱՆՋ 22	Համակարգերը պետք է մշակված լինեն տվյալների մեկանգամյա մուտքի սկզբունքով (յուրաքանչյուր համակարգ/ենթահամակարգ պետք է ստանա աշխատանքի համար պահանջվող տվյալները՝ առանց նույն տեղեկատվության կրկնակի մուտքագրման պահանջի): Պետք է լինի ուղղակի կապ համակարգերի/ենթահամակարգերի միջև, աշխատանքի գործընթացը պետք է կառավարվի համակարգչի կողմից և սկիզբ դրվի գործընթացներին ինչպես նույն, այնպես էլ այլ համակարգերում/ենթահամակարգերում՝ համաձայն նախապես սահմանված կանոնների:

4.9.2. Ճկունություն

ՊԱՀԱՆՋ 23	Համակարգերի կոնֆիգուրացիոն փոփոխությունները և թարմացումները պետք է հեշտորեն իրականացվեն և որևէ ազդեցություն չունենան համակարգերի աշխատանքի վրա:

ՊԱՀԱՆՋ 24	Պատվիրատուն պետք է հնարավորություն ունենա համակարգերում կատարել կոնֆիգուրացիոն փոփոխություններ, որոնք կհամաձայնեցվեն կատարողը հետ տեխնիկական առաջադրանքների մշակման փուլում:

4.9.3. Ընդլայնում

ՊԱՀԱՆՋ 25	Համակարգերը պետք է լինեն ընդլայնվող:
ՆԱԽԸՆՏՐԵԼԻ ՊԱՀԱՆՋ 5	Համակարգերի յուրաքանչյուր փոփոխություն պետք է իրականացվի ծրագրային ապահովման կոդերի նվազագույն փոփոխություններով:

4.9.4. Փոխգործելիություն

ՊԱՀԱՆՋ 26	Համակարգերը պետք է առանց էական կառուցվածքային փոփոխությունների կարողանան աշխատել այլ համակարգերի և ծրագրերի հետ:
ՊԱՀԱՆՋ 27	Համակարգերի նախագծումը պետք է իրականացվի այնպես, որ համակարգերի միջերեսների միջոցով տվյալների մուտքագրումից բացի օգտվողները կարողանան ներկայացվող տեղեկատվությունը փոխանցել xml հաղորդագրությունների միջոցով:

4.9.5. Անվտանգություն

ՊԱՀԱՆՋ 28	Ծրագրային մակարդակում պետք է իրականացվեն մուտքի թույլատրման (access/authorizaton) մի շարք միջոցառումներ, որոնք ապահովելու են վավերացված մուտքը միայն նախատեսված օգտվողների համար: Մուտքի իրավունքները պետք է հիմնված լինեն դերերի վրա: Յուրաքանչյուր դերի համար պետք է սահմանված լինեն կոնկրետ իրավունքներ: Պետք է իրականացվեն նաև գաղտնաբառերի պարբերական թարմացման (password expire policy) և մուտքային տարբեր մակարդակների (access level control) ապահովման միջոցառումներ:
ՊԱՀԱՆՋ 29	Համակարգերը պետք է ապահովեն էլեկտրոնային թվային ստորագրություն կիրառելու հնարավորություն: Օգտվողների նույնականացումը համակարգերում իրականացվում է անձի նույնականացման քարտի միջոցով:
ՊԱՀԱՆՋ 30	Տվյալների մակարդակում պետք է կատարվեն միջոցառումներ՝ անձնական տվյալների անվտանգությունը տվյալների շտեմարանների անվտանգ կառուցվածքի միջոցով ապահովելու համար:
ՊԱՀԱՆՋ 31	Համակարգերը պետք է իրականացնեն տեղեկատվության ցանկացած փոփոխության, ցանկացած գործողության գրանցում (logging): Օգտագործողի բոլոր գործողությունները պետք է գրանցվեն գրանցամատյանում: Գրանցամատյանների միջոցով պետք է հնարավոր լինի հետևել, թե երբ և ում կողմից ինչ գործողություններ են իրականացվել համակարգում: Գրանցումը, ի լրումն այլ տեղեկատվության, պետք է ներառի գործողության ժամը, IP հասցեն, կատարողի ինքնությունը և այլն:

ՊԱՀԱՆՋ 32	Համակարգերը պետք է ավտոմատ կերպով «արգելակեն» օգտվողի աշխատաշրջանը՝ օգտվողի «անգործության» սահմանված ժամանակաշրջանից հետո՝ դրա մասին հաղորդագրություն ուղարկելով օգտվողին:

4.9.6. Գործածելիություն

ՊԱՀԱՆՋ 33	Օգտվողի միջերեսը պետք է լինի հարմար օգտագործման և դյուրին յուրացման համար: Կիրառվող տերմինները պետք է լինեն հասկանալի և մատչելի վերջնական օգտվողի համար:
ՊԱՀԱՆՋ 34	Համակարգերը պետք է ապահովեն օգտվողի հեշտ և հարմար տեղաշարժը տարբեր մոդուլների միջև:
ՊԱՀԱՆՋ 35	Համակարգերի տեղակայման/թարմացման գործընթացը պետք է դյուրին լինի վերջնական օգտվողների համար:
ՊԱՀԱՆՋ 36	Համակարգերի յուրաքանչյուր մոդուլ պետք է ունենա որոնման արդյունավետ մեխանիզմ: Պետք է հնարավոր լինի իրականացնել որոնում և զտում ըստ տվյալային տարրի կամ դրա համակցության:

4.10. Հաշվետվությունների ձևավորում

ՊԱՀԱՆՋ 37	Համակարգերը պետք է ունենա հաշվետվությունների ձևավորման գործիք, որը պետք է լինի հարմարեցվող՝ համապատասխան լիազորություններով օժտված համակարգի օգտվողի պահանջների համաձայն:
ՊԱՀԱՆՋ 38	Համակարգի կիրառական ծրագրին հատուկ (ֆիքսված) հաշվետվությունները պետք է ինտեգրվեն յուրաքանչյուր մոդուլում: Բոլոր դինամիկ (ճկուն) (մի քանի մոդուլների տվյալների համակարգմամբ և մշակմամբ) հաշվետվությունները պետք է լինեն առանձին «հաշվետվությունների» մոդուլում: Հաշվետվությունների մոդուլը պետք է՝ համապատասխան լիազորություն ունեցող օգտվողին հնարավորություն ընձեռի կիրառել ցանկացած ժամկետներ և թվաբանական գործողություններ, ինչպես նաև սահմանել տողեր և այունակներ: Համակարգերը պետք է հնարավորություն ընձեռի կազմել նոր հաշվետվություններ՝ առանց օգտագործելու ծրագրավորման որևէ գործիք:
ՊԱՀԱՆՋ 39	Տվյալների շտեմարանում պահված ցանկացած տվյալի վերաբերյալ պետք է հնարավոր լինի ձևավորել հաշվետվություն:
ՊԱՀԱՆՋ 40	Հաշվետվությունները պետք է հնարավոր լինի ձևավորել PDF, XLS(X), DOC(X) ձևաչափերով:

4.11. Լեզվի ընտրություն

ՊԱՀԱՆՋ 41	Համակարգերի միջերեսները պետք է լինեն երեք լեզվով՝ հայերեն, անգլերեն և ռուսերեն:

ՀԱՆՁ 42	Պետք է հնարավոր լինի տվյալները, ինչպես նաև տեղեկատու աղյուսակները մուտքագրել երեք լեզվով՝ հայերեն, անգլերեն և ռուսերեն:

4.12. Բացահայտված թերություններ

ՊԱՀԱՆՁ 43	Կատարողը տրամադրած ծրագրային ապահովումները և մատուցված ծառայությունները պետք է զերծ լինեն նախագծման, ծրագրային և այլ թերություններից, որոնք կարող են հանգեցնել համակարգերի և (կամ) վերջինիս բաղկացուցիչ մասերի ոչ պատշաճ աշխատանքին, նախանշված պահանջների չկատարմանը, կատարողականության, հուսալիության, ընդլայնման, արտադրողականության խափանմանը:
ՊԱՀԱՆՁ 44	Երաշխիքային սպասարկման ընթացքում համակարգերի նախագծման, ծրագրավորման կամ կատարողի կողմից մատուցված ծառայությունների հետ կապված որևէ թերության բացահայտման դեպքում կատարողը պետք է պատվիրատուի հետ խորհրդակցի և բացառապես իր ֆինանսական միջոցներով վերացնի խնդիրը:
ՊԱՀԱՆՁ 45	Կատարողը պատասխանատու չի լինի երևան եկած վնասի կամ թերության վերացման համար հետևյալ դեպքում՝ • պատվիրատուի կողմից համակարգերի ոչ պատշաճ գործարկում կամ պահպանում, • բնական մաշվածություն, • պատվիրատուի կամ երրորդ կողմի միջոցով համակարգում փոփոխություններ անելու դեպքում, որը չի հաստատվել կատարողի կողմից:
ՊԱՀԱՆՁ 46	Թերության բացահայտման դեպքում պատվիրատուն կծանուցի կատարողին այդ մասին՝ ներկայացնելով թերության նկարագրությունը՝ առկա ամբողջ փաստարկներով:

ԿԱՆՈՆ 47	Համակարգերի ընդունման թեստի արդյունքները դասակարգվելու են հետևյալ սկզբունքով. **Արգելափակող (Blocker)** — Արգելափակող սխալ, որը թերում է համակարգի աշխատանքի խափանմանը, որի արդյունքում համակարգի կամ դրա հիմնական գործառույթների հետ հետագա աշխատանքն անհնար է դառնում: **Կրիտիկական (Critical)** — Կրիտիկական սխալ, որի արդյունքում համակարգի բիզնես տրամաբանությունը սխալ է, առկա է անվտանգության խնդիր, առաջանում է սերվերի խափանում և այլն: **Հիմնարար/կարևոր (Major)** — Բիզնես տրամաբանության հիմնական մասը ճիշտ չի աշխատում, թերությունը կրիտիկական չէ, հնարավոր է շարունակել աշխատանքը թեստավորվող համակարգի հետ: **Աննշան(Minor)** — Աննշան սխալ, որը չի խախտում թեստավորվող հատվածի բիզնես տրամաբանությունը, օգտվողի միջերեսի ակնհայտ խնդիր: **Չնչին (Trivial)** — Չնչին խնդիր, որը չի վնասաբերում բիզնես տրամաբանությանը, վատ վերարտադրվող սխալ, որն օգտվողի միջերեսից հիմնականում տեսանելի չէ, երրորդ կողմի գրադարանների, ծառայությունների հետ կապված խնդիր, որը չունի որևէ ազդեցություն համակարգի ընդհանուր որակի վրա:
ՊԱՀԱՆՋ 48	Թեստավորման արդյունքում ներքոնշյալ դեպքերում համակարգերը չեն ընդունվելու պատվիրատուի կողմից և մինչև պայմանագրով սահմանված ծառայությունների մատուցման ժամկետի ավարտը կատարողը պարտավոր է շտկել թերությունները: - Արգելափակող (Blocker) որևէ սխալի առկայություն, - Կրիտիկական (Critical) որևէ սխալի առկայություն, - Հիմնարար/կարևոր (Major) 2-ից ավելի սխալի առկայության դեպքում, - Աննշան (Minor) 10-ից ավելի սխալի առկայության դեպքում, - Չնչին (Trivial) 30-ից ավելի սխալի առկայության դեպքում:

4.13. Երաշխիքային սպասարկման իրականացում

ՊԱՀԱՆՋ 49	կատարողը պարտավոր է իրականացնի մեկ տարվա երաշխիքային սպասարկում՝ յուրաքանչյուր տեղադրված և ընդունված ծրագրային ապահովման համար: Համակարգի մեկ տարվա երաշխիքային սպասարկումն սկսվում է պատվիրատուի կողմից յուրաքանչյուր համակարգի շահագործումն սկսելու վերաբերյալ կատարողը տեղեկացնելու պահից:

ՀԱՆՁ 50	Համակարգի սպասարկման ժամերն են 9:00 մինչև 18:00-ն երկուշաբթիից շաբաթ՝ բացի տոն օրերից: Անհրաժեշտության դեպքում համակարգերի անխափան աշխատանքի ապահովման նպատակով կատարողը կիրականացնի նաև ընդլայնված սպասարկում՝ ստանալով ծանուցում դրա մասին պատվիրատուից:
ՊԱՀԱՆՁ 51	Ծրագրային ապահովումների երաշխիքային սպասարկումը պետք է առնվազն ներառի՝ • համակարգերի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով անհրաժեշտ ոչ ծավալուն փոփոխությունների իրականացում (համակարգերի ոչ ծավալուն ծրագրային փոփոխություններ, որոնք կապված են օրենսդրական փոփոխությունների, ինչպես նաև ծառայության վարչարարության առանձին հարցերի լուծման հետ), • համակարգերի փոփոխությունների թարմացում և կարգաբերում, • համակարգերի օգտվողներին խորհրդատվություն և տեխնիկական աջակցություն ցուցաբերող մասնագիտացված խմբերի մոտ ծրագրային ապահովումների մասով ի հայտ եկած հարցերի շուրջ պարզաբանումների տրամադրում, • տվյալների շտեմարանի (ՏՇ) կարգավորում և սպասարկում՝ • ՏՇ-ի ծրագրային ապահովման թարմացումների իրականացում, • ՏՇ-ի արխիվացումն իրականացնող ծրագրային ապահովման սպասարկում և արխիվացման կազմակերպման խորհրդատվություն, • ՏՇ-ի հետ առնչվող խնդիրների կարգավորման շուրջ խորհրդատվություն, իսկ անհրաժեշտության դեպքում խնդիրների վերացման նպատակով միջամտություն, • ՏՇ-ի օպտիմալացման խնդիրների վերաբերյալ խորհրդատվություն: • համակարգերի և նրա օգտվողների միջև տվյալների փոխանակման ցանցի կարգավորման և սպասարկման վերաբերյալ խորհրդատվության տրամադրում, • համակարգերի անխափան աշխատանքն ապահովող տարբավորումների կարգավորման և սպասարկման վերաբերյալ խորհրդատվության տրամադրում, • համակարգերում սխալների/թերությունների հետազոտություն և դրանց շտկում՝ ներառյալ ժամանակավոր լուծումների տրամադրում և թերությունների շրջանցում մինչև համակարգերի կարգաբերումները և թարմացումները, • թարմացումների մշակում, թեստավորում, տեղադրում, • ծրագրային ապահովման նոր տարբերակների տրամադրում և տեղադրում, ինչպես նաև համապատասխան փաստաթղթերի և նյութերի թարմացում, • համակարգերի կարգավորում, երբ դրա անգործելիությունը վերագրվում է ծրագրային թերություններին կամ սխալներին, • կորած, վնասված տվյալների վերականգնման և շտկման, սխալ տվյալների ուղղմանն աջակցություն, • համակարգերի օգտվողների սպասարկման Help Desk ծառայություն, • այլ խորհրդատվության տրամադրում:

4.14. Վերահսկողություն և հաշվետվություններ

ՊԱՀԱՆՁ 52	կատարողը և (կամ) վերջինիս անունից ծառայություններ մատուցող ենթակապալառուն պարտավոր են աջակցել պատվիրատուին՝ ստուգելու մատուցվող ծառայության ընթացքը և որակը:

ԿԱՆՈՆ 53	կատարողը պետք է ներկայացնի հաշվետվություններ պատվիրատուին՝ • արձանագրած առաջընթացի, խնդիրների և դրանց լուծումների մասին եռամսյակային հաշվետվություններ, որոնք պետք է ներկայացվեն յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում, • ծառայությունների մատուցման յուրաքանչյուր փուլի ավարտից հետո հաշվետվություն՝ դրան կցված համապատասխան փաստաթղթերով և հանձնման-ընդունման արձանագրությամբ, • յուրաքանչյուր ուսուցման ավարտից հետո հաշվետվություն՝ դրան կցված ուսուցման արդյունքներով, • վերջնական հաշվետվություն:
ՊԱՀԱՆՋ 54	Հաշվետվությունները պետք է տրամադրվեն էլեկտրոնային տարբերակով:

5. Իրավական պայմաններ

ՊԱՀԱՆՋ 55	Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման արդյունքները հանդիսանում են պատվիրատուի սեփականությունը: Պատվիրատուն իրավունք ունի օգտագործելու, հրատարակելու, փոխանցելու, տեղափոխելու դրանք իր հայեցողությամբ՝ առանց որևէ սահմանափակման՝ չխախտելով հեղինակների անձնական ոչ գույքային իրավունքները:
ՊԱՀԱՆՋ 56	Կատարողը պատվիրատուին տրամադրում է ծրագրային ապահովման օգտագործման անժամկետ լիցենզիա, որը հնարավոր չէ հետ կանչել:
ՊԱՀԱՆՋ 57	Լիցենզիան պատվիրատուին հնարավորություն է տալիս լրամշակել, ընդլայնել, պատճենել կամ մշակել ածանցյալ ծրագրային ապահովում, ինչպես նաև առանց որևէ սահմանափակման կարգաբերել ծրագրից օգտվելու անհատական աշխատատեղեր:
ՊԱՀԱՆՋ 58	Լիցենզիայի շրջանակներում պատվիրատուն իրավասու է վեր հանել և փոխանցել նախագծման ալգորիթմները և ծրագրային կոդերը, ինչպես նաև ծրագրային փաստաթղթերը, գրառումները պատվիրատուի համար կապալառու հանդիսացող երրորդ կողմին՝ տեխնիկական աջակցության, համակարգերը լրացուցիչ գործառույթներով հավելելու նպատակով այն դեպքում, երբ պատվիրատուն երրորդ կողմից ստանա գրավոր պարտավորություն այն մասին, որ առևտրային նպատակներով չի օգտագործի վերոնշյալը, ինչպես նաև չի փոխանցի այլ կողմի առանց գրավոր համաձայնության:

ԿԱՆՈՆ 59	Յուրաքանչյուր ծառայությունների մատուցման իրականացումից առաջ կատարողը պետք է ստանա պատվիրատուի համաձայնությունը՝ սկսելու համապատասխան ծառայությունների մատուցումը: Համակարգի ընդունման թեստից հետո մինչև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրումը կատարողը պատվիրատուին է տրամադրում ծրագրային ապահովմանն առնչվող ամբողջ նյութերը (ծրագրային կոդեր, տվյալների շտեմարանի և այլ կիրառական ծրագրերի տեղակայման սցենարներ, կիրառական ծրագրեր, գրադարաններ, ֆայլեր, փաթեթներ և այլ ծրագրային ապահովումներ, որոնք հարկավոր են համակարգի բնականոն աշխատանքի և ապարատային ապահովման վրա համակարգի ներդրման, կոնֆիգուրացման, շահագործման համար, համակարգերի ներդրումը նկարագրող մանրամասն փաստաթուղթ, որտեղ հմուտ մասնագետների համար հասկանալի ձևով նշված կլինեն համակարգերի ներդրման համար անհրաժեշտ ծրագրային ապահովումները, կիրառական սերվերները, գրադարանները, դրանց տարբերակները, ներդրման քայլերի հաջորդականությունը և այլն, համակարգերը նկարագրող տեխնիկական փաստաթղթերը) և այլ փաստաթղթերը: Կատարողը պատվիրատուին ներկայացնում և երաշխավորում է, որ՝ • Պատվիրատուին տրված ծրագրային ապահովման կոդը և փաստաթղթերն ամբողջական են, պատշաճ կերպով կազմված և ճշգրիտ պատճեն են ծրագրային ապահովման վերջնական ընդունման ժամանակահատվածում շահագործվող ծրագրային ապահովման տարբերակի: • Ցանկացած լրամշակումից հետո 15 օրվա ընթացքում կատարողը պատվիրատուին կտրամադրի փոփոխված ծրագրային կոդը, ինչպես նաև համապատասխան փաստաթղթերը, որոնք նույնպես պետք է լինեն ամբողջական, պատշաճ կերպով կազմված և համապատասխանեն լրամշակված ծրագրային ապահովման գործող տարբերակին: • Ծրագրային կոդը կպարունակի ամբողջ տեղեկատվությունը՝ընթեռնելի տարբերակով այնպես, որ ծրագրավորողը կամ վերլուծաբանը կարողանա պահպանել և բարելավել ծրագրային ապահովումը: Ծրագրային կոդը և համապատասխան փաստաթղթերը պետք է պարունակեն ծրագրավորողի բոլոր մեկնաբանությունները, տեղեկատվության մոդելները, գործընթացների հերթագայության սխեմաները և այլն:
ՊԱՀԱՆՋ 60	Ծրագրային ապահովումների լիցենզիան պետք է լինի՝ • ոչ մենաշնորհային, • ամբողջությամբ վճարված և անչեղարկելի, • ՀՀ-ում գործող, • թույլ տա, որպեսզի ծրագրային ապահովումը հնարավոր լինի՝ • - օգտագործել կամ պատճենել, նաև պահեստային/սերվերային համակարգիչներում, որոնք կլինեն նույն կամ համանման հզորությամբ: Այն դեպքում, երբ առաջնային համակարգիչները շահագործումից դուրս են եկել, ծրագրային ապահովումը պետք է հնարավոր լինի խնայմիտ անցումային շրջանում փոխանցել առաջնային համակարգչից պահուստային համակարգիչ. • - օգտագործվել, պատճենվել կամ տեղափոխվել փոխարինող համակարգիչների վրա կամ օգտագործումը հիմնական և փոխարինող համակարգիչների վրա կարող է իրականացվել զուգահեռ. • - այլ համակարգիչներից միանալ հիմնական կամ փոխարինող համակարգիչներին և օգտագործվել կամ պատճենվել այլ համակարգիչներում այնքանով, որքանով պահանջվում է տվյալ հասանելիության ապահովման համար. • - վերարտադրել անվտանգ պահպանման կամ փոխարինման նպատակով. • - պատվիրատուի կողմից օգտագործման նպատակով ադապտացվել, հարմարեցվել և համակցվել այլ ծրագրերի հետ այնպես, որ ածանցյալ ծրագրային ապահովումը կներառի տրամադրված ծրագրային ապահովման ցանկացած նշանակալից մասը:

ՊԱՀԱՆՋ 61	Պատվիրատուին սույն պայմանագրի համաձայն տրամադրված ծրագրային ապահովումների և նյութերի պատճենումը չի խախտի երրորդ կողմի մտավոր սեփականության իրավունքը, և պատվիրատուն ունի իրավունք և իր իսկ միջոցներով՝ գրավոր կերպով հավաստագրված, իրականացնելու իրավունքների, ինչպես նաև մյուս համաձայնությունների փոխանցում, որն անհրաժեշտ է հանձնարարականների իրականացման, լիցենզիաների և սեփականության իրավունքների փոխանցման, ինչպես նաև պայմանագրում ներկայացվող այլ երաշխիքների փոխանցման համար, իսկ պատվիրատուի համար՝ պայմանագրում նշված այդ իրավունքներն ստանձնելու համար: Առանց որևէ սահմանափակման կատարողը կապահովի ձեռք բերված բոլոր գրավոր համաձայնությունները, ինչպես նաև իրավունքների փոխանցումն իր աշխատողներից և այլ անձանցից, որոնք մասնակցել են ծառայությունների մատուցմանը:

6. Առաջարկի ներկայացում

ՊԱՀԱՆՋ 62	կատարողը պետք է ներկայացնի յուրաքանչյուր պահանջի ապահովման նկարագրությունը:

7. Ծառայությունների մատուցման ժամանակացույցը

Մինչև 2 շաբաթ համակարգի ենթակառուցվածքների տեխնիկական առաջադրանքների կազմում և համաձայնեցում:
Մինչև 4 ամիս տևողությամբ ծրագրավորման աշխատանքների իրականացում:
Մինչև 4 ամիս տևողությամբ ներդրվող ենթահամակարգերի ուսուցման գործընթաց՝ծրագրավորման աշխատանքներին զուգահեռ, հայտնաբերված խնդիրների շտկում, տեղեկատվական տպաստարկում:
Մինչև 3 շաբաթ ետուսուցման սպասարկում, ծրագրավորում (հայտնաբերված խնդիրների շտկում):
3 ամիս (սա գործում է համակարգը գործարկելու հաջորդ օրից) երաշխիքային տպասարկում՝ համաձայն վերոնշյալ պահանջների:

8. Ակնկալվող արդյունքներ

Ակնկալվում է, որ կատարված աշխատանքների արդյունքում ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ը կունենա՝

1. ՀՀ ԳՆ ՍԱՊԾ տեղեկատվական ենթակառուցվածքի ընդլայնված նոր ճարտարապետություն.
2. Համակարգերի մշակման և (կամ) փոփոխման տեխնիկական առաջադրանքներ, որոնց հիման վրա կատարող կազմակերպության ծրագրավորողները վերջնական տեսքով կկատարեն համակարգի ծրագրավորման աշխատանքները.
3. Թեստավորված և ներդրված համակարգեր.
4. Համակարգերի օգտվողի ձեռնարկներ.
5. Ուսուցում անցած օգտվողներ:

9. Կազմակերպչական հարցեր

Պատվիրատուն Հայաստանի Հանրապետության ԳՆ ՍԱՊԾ-ն է:
ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ն պատասխանատու է սույն հանձնարարականի շրջանակներում կատարողի կողմից իրականացված աշխատանքների ընդունման համար:

Գաղտնիություն

Կատարողը և (կամ) վերջինիս անունից ծառայություններ մատուցող ենթակապալառուն հանձն են առնում գաղտնի պահել ամբողջ այն տեղեկատվությունը, որը հանրամատչելի չէ և չեն ստանձնի որևէ այլ հանձնարարություն, որը կհանգեցնի շահերի բախման:
Կատարողը և (կամ) վերջինիս անունից ծառայություններ մատուցող ենթակապալառուն պարտավորվում են առանց պատվիրատուի գրավոր համաձայնության որևէ կողմի (բացի նախագծերի կազմակերպչական կառուցվածքում նշված անձանց) չտրամադրել աշխատանքների իրականացման շրջանակներում ստացված որևէ տեղեկատվություն՝ անկախ ստացման ձևից (գրավոր, բանավոր, էլեկտրոնային և այլն): Սույն դրույթը կիրառվում է նույնիսկ պայմանագրի դադարեցումից հետո:
Պայմանագրի դադարեցումից հետո կատարողը և (կամ) վերջինիս անունից ծառայություններ մատուցող ենթակապալառուն ոչ ուշ, քան 30 օրվա ընթացքում պետք է ոչնչացնեն պայմանագրի շրջանակներում ստացված տեղեկատվությունը՝ անկախ ձևից և բովանդակությունից՝ բացառությամբ այն դեպքերի, երբ ՀՀ օրենսդրությունը պահանջում է դրանց պահպանումը:

Գնորդ
ՀՀ ԳՆ սնանդամթերքի անվտանգության
պետական ծառայության աշխատակազմ
ք. Երևան, Կոմիտասի 49/2
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչության
Հ/Հ 900011404093
ՀՎՀՀ 00454227

_____ Կ.Միրզոյան
/ստորագրություն/
/աշխատակազմի ղեկավար/

Կ.Տ

Վաճառող
« Ռեսեթ Կոմպյուտեր Սերվիսիս »ՍՊԸ
ք. Երևան, Ազատության 24/19

«Յունիբանկ» ԲԲԸ

Հ/Հ 24100072364300

ՀՎՀՀ 05018448

_____ Ա.Ավագյան
/ստորագրություն/
/դիրքերն/

Կ.Տ

Հավելված N 2
«27» 06 2017թ. կնքված
ՀՀ ԳՆ ՍԱՊԾ ԳՀԾՁԲ17/1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2017թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	72261100/1	Ծրագրային ապահովման ծառայությունների մատուցում	... %	... %	... %	... %	... %	21550000	21550000	21550000	21550000	21550000	21550000	21550000	**21,550.000**

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

** հրավերում գումարները նշվում են դրամով, իսկ պայմանագիրը կնքելիս դրամի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

Գնորդ
ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության
պետական ծառայության աշխատակազմ
ք. Երևան, Կոմիտասի 49/2
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչության
Հ/Հ 900011404093
ՀՎՀՀ 00454227

_____ Ա.Միրզոյան
/ստորագրություն/
/աշխատակազմի ղեկավար/
Կ.Տ

Վաճառող
« Ռեսեթ Կոմպյուտեր Սերվիսիս» ՍՊԸ
ք. Երևան, Ազատության 24/19
«Յունիբանկ» ԲԲԸ
Հ/Հ 24100072364300
ՀՎՀՀ 05018448

_____ Ա.Ավագյան
/ստորագրություն/
/անուն/
Կ.Տ

ՀՀ ԳՆ ՍԱՊԾ ԳՀԾՁԲ17/1 « » 2017թ.
ծածկագրով պայմ

Պայմանագրի կողմ

_____

գտնվելու վայրը _____
հհ _____

_____

հվհհ _____

Պատվիրատու

_____

գտնվելու վայրը _____
հհ_____

_____

հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «___» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____
Պայմանագրի կողմը՝ ի դեմս _____, և
կատարման վերաբերյալ «___» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի հ
եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում
են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն
արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	Մատուցված ծառայությունների քանակական ցուցանիշը		Կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված
2017թ. կնք
ծածկագրով պայմանա

ՀՀ ԳՆ ՍԱՊԵ ԳՀՇՁԲ17/1 " "

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն